ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 մայիսի 2023 թվականի թիվ 44-Ա

ք. Երևան

«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2022 թվականի փետրվարի 11-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

2022 թվականի փետրվարի 11-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ դիստրիբյուտոր) դիմումում նշված է ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթի պահանջի խախտման փաստը:

2022 թվականի փետրվարի 11-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով դիստրիբյուտորը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում տեսալսողական ծրագրերի վերահաղորդման ծառայություններ մատուցող ցանցային օպերատորի կողմից («ՋԻ ԷՆ ՍԻ ԱԼՖԱ» ՓԲ ընկերության ապրանքային նշանի ներքո՝ «Ռոստելեկոմ») սկսած 2022 թվականի հունվարի 01-ից առանց համապատասխան իրավական հիմքերի (պայմանագրի) իրականացվում է «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Դիստրիբյուտորը հայտնում է նաև, որ հանդիսանում է մի շարք տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներառված է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.tvradio.am: Ի թիվս այլնի՝ դիստրիբյուտորը հանդիսանում է նաև նշված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը:

Դիստրիբյուտորն իր դիմումում նշում է նաև, որ ցանցային օպերատորի հետ վերը նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ պայմանագիր և/ կամ որևէ համաձայնագիր չի կնքել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորի դիմումը, 2022 թվականի փետրվարի 11-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մարտի 09-ի թիվ 13-Ա հրամանը՝ ցանցային օպերատորի մոտ իրականացվել է մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2022 թվականի մարտի 10-ին կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 11:00-ից 11:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում է «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի 2022 թվականի մարտի 10-ի զեկուցագրով տեղեկացրել է, որ ցանցային օպերատորը 2022 թվականի փետրվարի 07-ին թիվ 06-ՀՍ/22 գրությամբ ներկայացրել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկը, որում վերոնշյալ ծրագրերը ներառված չեն: Սակայն ցանցային օպերատորը 2022 թվականի մարտի 10-ի թիվ 18-ՀՍ/22 գրությամբ տեղեկացրել է, որ իր ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում տեղի են ունեցել փոփոխություններ՝ ի թիվս այլնի ավելացել են «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը, որոնք վերահաղորդվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 4-ի որոշման հիման վրա:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի փետրվարի 14-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը:

Ցանցային օպերատորը հարուցված վարչական վարույթի ընթացքում 2022 թվականի մարտի 11-ին Հանձնաժողով գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին, որ իր կողմից ներկայումս վերահաղորդվում է «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/9430/02/22) հիման վրա:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի թիվ ԵԴ/9430/02/22 քաղաքացիական գործով՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման համաձայն՝ արգելվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությանը և այլ անձանց կատարելու «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության կողմից վիճելի ծրագրերի (НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրեր) հեռարձակման (վերահեռարձակման) իրավունքի

դադարեցմանն ուղղված գործողություններ՝ շարունակելով «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությանն այդ իրավունքի տրամադրումն այն պայմաններով, որոնք գործել են մինչև 2022 թվականի հունվարի 01-ը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, նույն հոդվածի 4-րդ մասը և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշումը (քաղաքացիական գործ՝ թիվ ԵԴ/ 9430/02/22), 2022 թվականի մարտի 16-ի թիվ 37-Ա որոշմամբ կասեցրել է ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ կարճել է «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության՝ հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը խախտող գործողությունները կանխելու պահանջի մասին գործը՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով (2023 թվականի մարտի 29-ին ցանցային օպերատորի ներկայացուցչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ գործի վարույթը կարճելու մասին, ըստ որի հայտնել է,որ սույն գործով հայցի հարուցմամբ ցանցային օպերատորը նպատակ էր հետապնդել կնքելու «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման հնարավորություն տվող և հավասար մրցակցային պայմաններ ապահովող պայմանագիր և քանի որ 2023 թվականի փետրվարի 01-ին «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերության հետ արդեն իսկ կնքել է պայմանագիր և այդ տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում է նշված պայմանագրի հիման վրա):

2023 թվականի մայիսի 02-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով դիստրիբյուտորը խնդրում է վերսկսել իր դիմումի հիման վրա 2022 թվականի փետրվարի 11-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթը, քանի որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/9430/02/22 քաղաքացիական գործով 2023 թվականի տրված կատարողական թերթով վերացվել է Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 11-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքները (գրությանը կից ներկայացվել է «Կատարողական վարույթը կարճելու մասին» 2023 թվականի մարտի 24-ի որոշումը):

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 49-րդ հոդվածի 3-րդ մասով, վերսկսել է 2022 թվականի փետրվարի 11-ին «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին, և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության

հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը սահմանում է.

«1. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացրած ապացույցներով, ամրագրում ենք, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տվյալ դեպքում, վարչական վարույթը հարուցելուց հետո Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացվել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ 2022 թվականի մարտի 10-ին կազմվել է արձանագրություն, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

- հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված տեղում դիտարկման արդյունքում՝ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են ցանցային օպերատորի կողմից,
- ցանցային օպերատորը վերահաղորդել է «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի ՝հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/9430/02/22) հիման վրա, համաձայն որի՝ արգելվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ»

ՍՊ ընկերությանը և այլ անձանց կատարելու «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության կողմից վիճելի ծրագրերի (НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրեր) հեռարձակման (վերահեռարձակման) իրավունքի դադարեցմանն ուղղված գործողություններ,

- ցանցային օպերատորը 2022 թվականի փետրվարի 07-ին թիվ 06-ՀՍ/22 գրությամբ ներկայացրել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկը, որում վերոնշյալ ծրագրերը ներառված չեն,
- ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի մարտի 10-ի թիվ 18-ՀՍ/22 գրությամբ տեղեկացրել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում տեղի ունեցած փոփոխություններ մասին, համաձայն ի թիվս այլնի ավելացել են «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը,
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ կարճվել է «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության՝ հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը խախտող գործողությունները կանխելու պահանջի մասին գործը՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով, քանի որ ցանցային օպերատորը 2023 թվականի փետրվարի 01-ին «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերության հետ կնքել է պայմանագիր և ներկայումս այդ տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում է նշված պայմանագրի հիման վրա:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ցանցային օպերատորը հարուցված վարչական վարույթի ընթացքում ներկայացված իր պարզաբանման մեջ նշել է, որ որևէ իրավախախտում թույլ չի տվել և իրենց կողմից վերը նշված տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի ՝հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման հիման վրա , ուստի Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում Իրավատիրոջ կողմից ներկայացված ապացույցը՝ կից ներկայացված Ռոստելեկոմի պաշտոնական կայքից արտատպվածքը, որն ըստ Իրավատիրոջ վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը, ինչպես նաև բացատրությունները հիմնավոր և բավարար չեն իրավախախտման փաստը ապացուցելու, ուստի արձանագրում ենք, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտում չի իրականացվել, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության

հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 8-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետ, 3-րդ մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

22 մայիսի 2023թ.
ք. Երևան